ԿԱՐԾԻՔ

Հարություն Գևորգի Սելիմյանի՝ «Դաւանական նոր իրավիճակը եւ ըմբռնումները՝ ըստ 19-րդ դարու 40-50-ական թթ. աւետարանական մամուլի (Կ. Պոլիս, Զմյուռնիա)» Թ.00.05 - «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

19-րդ դարում թուլացման ուղին բռնած Մերձավոր Արևելքի ամենախոշոր տերությունը՝ Օսմանյան Թուրքիան, որն իրենից ներկայացնում էր սոցիալ-քաղաքական տարբեր աստիճանների վրա գտնվող մշակութային ու կրոնադավանական զանազան ընդհանրություններին պատկանող 60-ից ավելի ազգերի ու ցեղերի մի խառնարան, դարձել էր եվրոպական մեծ տերությունների և ԱՄՆ-ի քաղաքական մրցակցության առարկա:

Միաժամանակ, կայսրությունը պարարտ հող էր արևմտյան երկրների հոգևոր և բարոյական քաղաքակրթական արժեքների ներթափանցման համար, որն իրականացվում էր առաջին հերթին կայսրության քրիստոնյա ազգաբնակչության և հատկապես արևմտահայերի միջոցով, որոնք XIX դ. 40-60-ական թվականներին կյանքի ազատականացման պատճառով ապրում էին աշխարհայացքային և ազգային ոգու վերածնության միտումներ:

Արևմտահայ իրականության մեջ բողոքականությունը սկսել է տարածվել 1820-1830-ական թվականներից, երբ հատկապես 1831թ. սկսում է գործել ամերիկյան միսիոներական «Բորդ» ընկերությունը: Այդ էր պատճառը, որ ժողովուրդը հաճախ բողոքական միսիոներներին հավաքական անունով կոչում էր «ինգլիզ»՝ նախ և առաջ ի նկատի ունենալով վերջիններիս խոսակցական հիմնական լեզուն՝ անգլերենը:

Ամերիկյան, շվեցարական, գերմանական բողոքական կազմակերպությունները և խմբերը, ինչպես այլուր, այնպես էլ արևմտահայ իրականության մեջ արտահայտում էին իրենց երկրների տնտեսական ձգտումները և սոցիալական հող նախապատրաստում նրանց գաղութատիրական քաղաքականության իրականացման համար: Սակայն հայերը բողոքականություն էին ընդունում գլխավորապես հույսեր տածելով, որ կունենան եվրոպական երկրների և ԱՄՆ-ի պաշտպանությունը, կկարողանան կրթվել նրանց ուսումնական հաստատություններում և ձերբազատվել ազգային ճնշումներից: Արևմտահայությանն առաջարկվող օգնությունն իրականացվում էր դավանափոխության նախապայմանով, որը պարարտ հող է գտնում հիմնականում Կ.Պոլսում, Զմյուռնիայում,

Նիկոմեդիայում, Մարաշում, Այնթապում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ գավառներում ու քաղաքներում:

Արդյունքը լինում է այն, որ 1836թ. հայ ավետարանականների կողմից Կ.Պոլսում հիմնադրվում է «Բարեպաշտության միաբանություն» կազմակերպությունը, որի նպատակն էր գավառներում ավետարանական գաղափարների տարածումը: 1846թ. հուլիսի 1-ին Կ.Պոլսի Բերա թաղամասում 40 հայ ավետարանականների կողմից հիմնադրվում է Հայ ավետարանական եկեղեցին, որի առաջին հովիվ է ընտրվում Աբիսողոմ Խաչատուր Ութուճյանը:

Հայ ավետարանականները հարուցելով բողոքական միսիոներների դժգոհությունը, չհարեցին բողոքական հարանվանություններից որևէ մեկին և կոչվեցի Հայաստանյայց ավետարանական եկեղեցի: Իսկ արդեն չորս տարի անց՝ 1850թ. նոյեմբերի 27-ին սուլթան Աբդուլ Մեջիդը հատուկ ֆերմանով 500 հոգուց բաղկացած Կ.Պոլսի հայ ավետարանական համայնքը ճանաչեց որպես առանձին կրոնական համայնք՝ «միլլեթ», որով սկիզբ դրվեց հայ ավետարանականների պաշտոնական գործունեությանը:

Ազգային-ազատագրական շարժումների ուժեղացման համեմատ բողոքական եկեղեցին փոխեց իր գործունեության մեթոդները՝ քրիստոնեական վարդապետության մեջ ներառելով տեղական պաշտամունքային ծեսերը: Հետևելով ունիթորների օրինակին բողոքականները սովորում էին հայերեն, աշխարհաբար թարգմանում կրոնական և ոչ կրոնական բնույթի գործերը, քարոզներն իրականացնում ժողովրդին հասկանալու լեզվով: Աստվածաշունչն ավելի հասանելի դարձնելու նպատակով ավետարանականները այն թարգմանեցին աշխարհաբար և հայատառ թուրքերեն, հրատարակեցին բացմաթիվ կրոնական գրքեր, դասագրքեր, թերթեր ու ամսագրեր: Վերջիններս հրատարակում են նաև հայ առաջին աշխարհաբար պարբերականը՝ «Շտեմարան պիտանի գիտելաց» վերնագրով, որը տպագրվում էր Զմյուռնիայում 1839-1854թթ.:

Վերապատվելի Հարություն Սելիմյանի կրոնա-աստվածաբանական և եկեղեցագիտական գիտակարգային վերլուծությամբ պայմանավորված ատենախոսությունը նվիրված 19-րդ դարի 40-50-ական թթ. Կ. Պոլիսում և Զմյուռնիայում Հայ ավետարանական եկեղեցու ազդեցությամբ ձևավորված կրոնա-դավանաբանական նոր մոտեցումների և ընկալումների լուսամանմանը:

Սկզբից ևեթ նշենք, որ հեղինակը խնդրին մոտեցել է մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով և անթաքույց պոռթկումով է ներկայացրել իր ուրույն մոտեցումները: Շեշտադրելով դավանական նոր իրավիճակը Հ. Սելիմյանն ավետարանական եկեղեցու ըմբռնումները դարձրել է ուսումնասիրման առարկա՝ պատմաաստվածաբանական դրսևորումների համատեքստում:

Հեղինակն իր առջև խնդիր է դրել և փորձել է ժամանակագրական ցուցիչների շրջանակներում, պատմաաստվածաբանական համակարգված մոտեցմամբ տեսական ու համեմատական վերլուծության ենթարկել ավետարանական աստվածաբանական ժառանգության աշխարընկալումը և դավանաբանական հայեցակարգի դիրքորոշումը:

Ատենախոսությունն ունի ընդունելի կառուցվածք և համամասնական ճիշտ բաժանում, որը ծառայում է թեմայի ըստ ամենայնի պարզաբանմանը: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և գրականության ցանկից (169 համակարգչային էջ):

Ներածության մեջ հիմնավորված են ուսումնասիրվող հիմնահարցի արդիականությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, ատենախոսության ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանական հիմքը, տրված է հիմնահարցի ուսումնասիրման աստիճանը, օգտագործված աղբյուրների ու գրականության վերլուծությունը և կառուցվածքը:

Ատենախոսության **I գլխում**, որը վերնագրված է՝ «**Եվրոպական բարեկարգումն ու արևմտահայ ավետարանականները XIX դ. 40-ական թթ.**» հեղինակը երեք ենթագլուխների սահմաններում և աղբյուրագիտական որոշակի տվյալների ու փաստագրական վկայությունների հիման վրա փորձել է ներկայացնել բողոքական եկեղեցու հոգևոր ակունքները՝ եկեղեցու բարեկարգության գաղափարախոսների՝ Մարտին Լյութերի, Ժան Կալվինի և Ուլրիխ Ցվինգլիի տեսությունները:

Վերապատվելի Հարություն Սելիմյանը հաջողությամբ վեր է հանել բողոքական դավանաբանության հինգ կարևոր դրույթները, այն է՝ 1) միայն Սուրբ գիրքը, 2) միայն հավատքով, 3) միայն շնորհով, 4) միայն Քրիստոսը, 5) փառքը միայն Աստծուն է:

Ատենախոսը կարողացել է նաև բացահայտել հումանիզմի և եկեղեցու բարեկարգության երկու հոսանքների միջև առկա հակասությունների հինգ ոլորտները, որոնք արտահայտվում են ա) ուսուցողական աստվածաբանության, բ) Սուրբ գրքի, գ) եկեղեցական աստվածաբանության, դ) ուսման և ե) հռետորաբանության նկատմամբ ուրույն վերաբերմունքով:

Վ. Հ. Սելիմյանն առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերել Կ.Պոլսում բողոքական քարոզչության գործում հայ ավետարանական շարժման դերի լուսաբանմանը: Նա հաջողությամբ ներկայացնում է Ավետարանական և քրիստոնյա մյուս եկեղեցիների տարբերությունները (Հայր Աստուծո, ս.Երրորդության, 7 խորհուրդների, եկեղեցու իշխանության ժխտման, հավատքի, պատարագի և այլն) և բողոքականության 3 հիմնական սկզբունքների հիման վրա առանձնացնում

Հայ ավետարանական եկեղեցու կազմակերպման 20 հիմնական դրույթները՝ չմոռանալով իհարկե ակնարկելու ավետարանականների գնահատելի դերը աշխարհաբար լեզվի տարածման գործում:

Կարևորություն է ներկայացնում I գլխի 3-րդ ենթավերնագիրը, ուր ներկայացվում են արևմտահայ իրականության և բողոքականության առաջին կրոնաթերթի՝ 180-ամյա «Աւետաբեր Շտեմարան»-ի բազմաբնույթ խնդիրներն ու նպատակները, որոնք իրենց մեջ ներառում են ինչպես արևմտահայ իրականության մեջ բողոքականության տարածման կարևորությունը, այնպես էլ կրթության և դաստիարակության միջոցով ազգի փրկության և կատարելագործման ճանապարհը: Հեղինակը բարեխղճությամբ արժևորել է թերթի համարներում տեղ գտած կրոնադավանաբանական, պատմաբանասիրական, գրական, կրթական, լեզվաբանական, լուսավորության, խրատաբանական, բարոյական վերածննդի և աշխարհիկ խնդիրներին նվիրված գրվածքների վերլուծությունը:

Ատենախոսության **II գլուխը** կրում է՝ **«Սիրո, հույսի և մեղքի ըմբռնումները հայ ավետարանական եկեղեցու մեջ»** խորագիրը և բաղկացած է երկու ենթագլուխներից:

Հ. Սելիմյանը նախ անդրադարձ է կատարել «Աւետաբեր» և Շտեմարան պիտանի գիտելեաց»-ի մեջ տեղ գտած սիրո և հատկապես Աստուծո նկատմամբ տածած սիրո և հույսի ընկալումներին, որոնք նա հիմնավորում է ինչպես հայ, այնպես էլ օտար բողոքական հեղինակների մոտեցումներով:

Ապա հեղինակը վեր է հանում պարբերականի էջերում տեղ գտած և սիրո պատվիրանին հակադրված մեղքի ու մեղսագործության ավետարանչական ընկալումները փորձելով ներկայացնել մեղքի՝ բարոյական այդ չարիքի կրոնափիլիսոփայական իր ուրույն մոտեցումները:

III գլուխը վերնագրված է՝ «Հոգևոր-մշակութային և ազգային կյանքի հիմնախնդիրները» և բաղկացած է երեք ենթագլուխներից:

Վերապատվելի Հ. Սելիմյանը բովանդակային վերլուծության է ենթարկել մի խումբ խնդիրներ, այն է՝ մարդու ազատականության տեսությունը, քաղաքակրթության և քրիստոնեության հարաբերակցությունը՝ ավետարանչական դավանաբանության հոլովույթում: Նա համապարփակ ներկայացնում է հայ ավետարանական պարբերականների մոտեցումները մշակույթի՝ որպես մարդկային ձեռքբերման կատարյալ ամբողջականության և հոգևոր մշակույթի՝ որպես հոգևոր կատարելության ամբողջության սահմանման վերաբերյալ:

Վերջաբանում հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական դրույթները, հետազոտության արդյունքներն ու ձևակերպված եզրակացությունները:

Նշենք, որ ատենախոսության ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակը որոշակի փաստական նյութի օգտագործման հիման վրա կարողացել է վեր հանել և համակողմանի քննական վերլուծության ենթարկել ավետարանական աշխարհընկալման դրսևորման հոգևոր հիմքերը, դրանց վրա հայ և եվրոպացի մտածողների ազդեցության միտումները, գործոնները և դրսևորումները բնութագրող ընդհանրական և մասնավոր օրինաչափությունները: Բարեխղճորեն հաշվի առնելով կրոնագիտության նախորդ ժամանակաշրջանի արդյունքները և ըստ արժանվույն գնահատելով հետազոտողների վաստակը, հեղինակը ընդլայնել ու խորացրել է հարցի ուսումնասիրումը նոր ժամանակաշրջանի խնդիրների հաշվառմամբ և համեմատական կրոնագիտության մեթոդաբանությամբ ստեղծել մի աշխատանք, որը համակողմանի և ամբողջական է ներկայացնում ավետարանականության աստվածաբանական հայեցակարգի բովանդակային ուղղվածությունը: Հեղինակն առաջին անգամ արդի կրոնագիտական, պատմաաստվածաբանական և եկեղեցագիտական մեթոդաբանության հիման վրա քննական վերլուծության է ենթարկել հիմնահարցերի մի խումբ, որոնք միտված են տեսակետների ու մոտեցումների վերարժևորմանը:

Ատենախոսությունը գրելիս ատենախոսը հայտնաբերել, ուսումնասիրել և գիտական շրջանառության մեջ է դրել Աստվածաշունչ մատյանը, մատենագիրների ստեղծագործություններ, ընդհանրացրել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներով լույս տեսած և ատենախոսության լիարժեքությունն ապահովվող շուրջ 120 անուն մենագրություններ, գիտական հոդվածներ, հանրագիտարաններ, պարբերական մամուլի տեղեկություններ:

Բարձր գնահատելով ատենախոսության գիտական արժանիքը, միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ կատարված աշխատանքը զերծ չէ նաև որոշ թերացումներից, որի կապակցությամբ ցանկանում ենք արտահայտել մեր որոշակի ցանկությունները:

1. Կարծում ենք, որ նպատակային կլիներ ատենախոսության մեջ տեղ գտած բողոքական աստվածաբանության բովանդակալից նյութի վերլուծությունը ներկայացվեր ոչ թե առանձին, այլ Կ. Պոլսի և Զմյուռնիայի ժամանակի հասարակական-քաղաքական և կրոնա-եկեղեցական կյանքի խմորումների հետ սերտորեն շաղախված, որով կհարստացվեր և կուժեղացվեր ատենախոսության պատմական հենքը և էլ ավելի ամբողջական կդառնար հիմնահարցի լիարժեքությունը:

2.Ատենախոսությունը էլ ավելի կշահեր, եթե աշխատանքի մեջ տեղ գտնեին թեմային առնչվող և հիմնահարցի գիտականությունն ապահովող այլ աշխատություններ ևս:

1.Գաբրիելյան Ս., Հայ բողոքականության անցյալն ու ապագան, Կ.Պոլիս, 1888:

2.Թութիկյան Վ., Հայ աւետարանական եկեղեցին 1846-1996, Ա. տ. և թ., 1996:

3.Պետիկյան Ա., Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի. Պատմական ակնարկներ, Նյու Յորք, 1946:

4.Տերոյան Վ., Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Եր., 2006:

5.Ութուճյան Ստ., Ծագումն և ընթացք Ավետարանականության ի Հայս, Կ.Պոլիս, 1914:

6.Փայասլյան Ստ., Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի սկզբից մինչև 1880-ական թվականների կեսերը, /թեկն. Ատենախոսություն/, Եր., 2007:

7.Քասունի Ե., Հայ ավետարանականության նպաստները հայ ժողովրդի կրոնական կյանքին, Բեյրութ, 1946:

8.Leon Arpee, A Century of Armenian Protestantism, N.Y., 1972.

9.Chopourian G., The Armenian Evangelical Performation, N.Y., 1972.

10.Chakmakjian H., The Armenian Evangelical Movement, Fresno, 1985.

11.Հայաստանյաց ավետարանական եկեղեցու պաշտոնական կայք http://www.eca.am

12.Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) պաշտոնական կայք. http://amaa.am/am

3. Կարծում ենք, որ ըստ արժանվույն համակարգված չէ գրականության ցանկը: Այսպես՝ Աստվածաշունչ մատյանը ներկայացված է ընդհանուր՝ գրքեր բաժնի մեջ, մինչդեմ ցանկալի կլիներ, որ այն ներկայացվեր առանձին, կամ նոր՝ մատենագիրներ ենթավերնագրի տակ, որտեղ պետք է առանձնացվեին նաև Գրիգոր Տաթևացու և Հովհան Ոսկեբերանի աշխատությունները, որոնք նույնպես, առանց տարբերակման տեղ են գտել ընդհանուր՝ գրքեր բաժնի հատվածում: Առանձին՝ հանրագիտարաններ բաժնում պետք է ներկայացվեր «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանը, իսկ առանձին՝ գեղարվեստական գրականություն բաժնում պետք է ներկայացվեին Ա. Դանթեի և Ռաֆֆու երկերը: Պարբերական մամուլի մեջ տեղ են գտել «Լրաբեր» հաս.գիտ., «Կանթեղ», «Հայագիտական հանդես», «Հայկազեան հայագիտական հանդես», «Նորավանք», «Պատմա-բանասիրական հանդես» գիտական ամսագրերը, որոնք պետք է ներկայացվեին «հոդվածներ» բաժնում, սակայն անպայման պետք է նշվեր հեղինակը, հոդվածի վերնագիրը, հրատարակության թիվը, համարը և էջերը:

4. Ճիշտ չեն ներկայացված նաև գիտական ապարատի հղումների հատվածը, որոնք շատ անգամ դրված են նախադասության կենտրոնում: Էջ 36-ում բացակայում է թիվ 34-ի հղումը: Էջեր

չունեն թիվ 53, 70, 77 հղումները: Գրեթե իսպառ բացակայում են «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելաց»-ից մեջբերված հղումների էջերը:

Հիշյալ թերություններն ամենևին էլ չեն նսեմացնում գիտականության դիրքերից գրված Վեր. Հ. Սելիմյանի ատենախոսության արժեքը, քանի որ այն ամբողջությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ունի գիտագործնական և ճանաչողական որոշակի արժեք և հարստացնում է հիմնահարցի պատմագրությունը:

Ուստի հաշվի առնելով կատարված բարեխիղճ աշխատանքը միջնորդում ենք պատմական գիտությունների գիտական աստիճաններ շնորհող «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտական խորհրդին՝ Հարություն Գևորգի Սելիմյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա լիովին արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու

Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու Ա. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի

Գիտական քարտուղար

Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ.Մ. ԻՍՊԻՐՅԱՆ

17. 02. 2021թ.